

Հ ա շ վ ե տ վ ո թ յ ո Ւ Ն

ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկի գյուղապետարանի 2013 թ-ի հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը կատարած աշխատանքների վերաբերյալ.

1.

- Ընթացիկ կիսամյակում անցկացրել ենք ավագանու չորս նիստ, կայացրել ենք որոշումներ, պատասխանել դիմումներին և գրություններին:
- Վճարել ենք գյուղապետարանի աշխատողների վեց ամսվա աշխատավարձը, չունենք սոց. վճարների և աշխատավարձի պարտքեր:
- Կիսամյակի ընթացքում հողի հարկի հավաքագրման ցուցանիշը կազմում է 125%, իսկ գույքահարկինը 77.3%, պետական դոտացիան ստացել ենք ժամանակին:
- Կազմակերպված ձևով նախապատրաստվել ենք գարնան գյուղատնտեսական աշխատանքներին և այդ նպատակի համար մարզպետարանի աջակցությամբ համայնք ենք ներկրել երեսուներկու տոննա կառավարության կողմից հատկացված սուբսիդավորված ամոնյակային սիլիտրա:
- Համագործակցելով «ԽՈՅ» ջրամատակարար ընկերության հետ Ժամանակին մաքրվել և վերանորոգվել է ներքին ոռոգման ցանցը համայնքի ջրոգտագործողներին մշտական ոռոգման ջրով ապահովելու համար:
- 2013թվականի մայիսի 12-ի կարկտահարությունից հետո ստեղծվել է հանձնաժողով համայնքի ղեկավարի գլխավորությամբ, այն համագործակցելով մարզպետարանի հետ, կառավարության որոշումները կատարելով, ամեն ինչ արվում է կարկտահարությունից տուժած գյուղացիների հոգսը թեթևացնելու: Համայնքի 52 ընտանիք օգտվել է կառավարության կողմից հատկացված հիսուն հազարական դրամ օգնությունից, չորս ընտանիքի լույսի պարտքն է գիչվել, տասը ընտանիք ընդգրկվել է «ընտանեկան աջակցություն» ծրագրի մեջ, տուժած յուրաքանչյուր ընտանիքի հատկացվել է 100գրամ ներկրված վարունգի սերմացու, 45-30լիտր դիզ վառելիք:
- Համայնքի բազմաթիվ ընտանիքներ, որոնք օգտվում են «Հայգյուղփոխրանկի» և այլ բանկերի վարկային ծրագրից, կառավարության աջակցությամբ՝ տոկոսադրույքը իջեցվել է 10%-ի և մարման ժամկետը երկարաձգվել է:
- Ջրնուղ կոյուղու աշխատակիցների կողմից կատարվել է համայնքի խմելու ջրի ցանցի ուսումնասիրություն: Համայնքը 2014 թվականին կներկայացվի ներդրումային ծրագրի շրջանակում հարցը լուծելու գործընթացին:
- Չնայած համայնքի առջև ծառայած կարևորագույն կենսական խնդիրները կամաց-կամաց իրենց լուծումն են ստանում, սակայն դեռ կան չլուծված հարցեր, ինչպիսիք են՝ խմելու ջուրը, դպրոցը, միջհամայնքային ճանապարհը, որոնք միշտ էլ եղել են գյուղապետի և գյուղապետարանի աշխատակիցների ուշադրության կենտրոնում, որոնց էլ փորձում ենք լուծում տալ մարզպետարանի անմիջական աջակցությամբ:

Համայնքի ղեկավար



(Signature)
Վարչագրություն

Ն. Հայրապետյան